

ՆԵՐՈՒԱԾ ԵՆ ՄԵՂՔԵՐԸ ՔՈ

Այն ժամանակ Պետրոսը մօտեցաւ նրան եւ ասաց. «Տէր, քանի՞ անգամ եթէ եղբայրս իմ դէմ մեղանչի պէտք է ներքեմ նրան, մինչեւ եօթն անգամ»: Յիսուս նրան ասաց. «Բեզ չեմ ասում թէ մինչեւ եօթն անգամ, այլ մինչեւ եօթանասուն անգամ եօթը»:

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ, քարոզիս այս բնաբանը վերցրել եմ Մատթէոսի Աւետարանից, ուր մեր Տէրը ներումի այսինքն անյիշաչարութեան դասեր է տալիս Պետրոսին:

Նոր Կտակարանի մէջ կարմիր թելի պէս անցնում է աստուածային մի շնորհ՝ դա ներման գաղափարն է: Առաջին հայեացքից ներումը այդքան էլ ցայտուն չի երեւում, իր տեղը կարծես թէ զիջելով սիրոյ, հաւատի, յոյսի գովերգմանը: Բայց զգայուն հոգիները տեսնում են այդ կարեւորագոյն շնորհի առկայութիւնը Նոր Կտակարանեան էջերում: Եւ ներումը նմանեցնում եմ հիւլէի, որը կարծես առաջին հայեացքից աննշան է թւում, բայց հիմքն է կազմում ողջ առարկայական աշխարհի: Եւ վերը նշուած Յիսուսի՝ Պետրոսին ուղղուած խօսքը ասածիս ցայտուն արտայայտութիւնն է. «Պետրոս բեզ չեմ ասում, թէ մինչեւ եօթն անգամ, այլ մինչեւ եօթանասուն անգամ եօթը»:

Ներման միջոցով մենք կարող ենք լուծել աստուածաբանական մի կարեւոր հարց. դա է Յիսուսի կատարեալ Աստուած լինելը: Պարզեմ միտքս:

Մարկոսի Աւետարանի մէջ Յիսուս ներում է մեղքերը. «Եւ Յիսուս, տեսնելով նրանց հաւատը, անդամալոյծին ասաց. -Որդեա՛կ, բռն մեղքերը ներուած են-»:

Ըստ հրէական օրէնքի դա կարող էր անել միայն Աստուած: Ներել կարող է միայն նա, ում դէմ մեղանչել ենք: Այս պարագային անդամալոյծը մեղանչել է Հայր Աստծոյ դէմ, նրան կարող էր ներել միայն Հայր Աստուած, բայց Յիսուս նրան ասաց. «Ներում եմ մեղքերը քեզ»: Այսինքն նա հանդէս էր գալիս որպէս Աստուած: Արդէն դա՛ էր փարիսեցիների եւ դպիրների կատաղութեան պատճառը առ Յիսուս: Սա ներման աստուածաբանութեան կարն եւ հակիրճ պատասխան է այն մտածումներին եւ աղանդներին, որոնք կասկածում կամ չեն հաւատում Յիսուսի կատարեալ Աստուած լինելուն:

Աստծոյ գթասրտութիւնը եւ ներումը իր յստակ դրսեւորումներն է ստանում Նոր Կտակարանում Յիսուսի կեանքով: Աստծոյ մարդանալը ամենամեծ ներումն է մարդկութեան մեղքերի ինչպէս աղբիւրի ակունքից բխող ջուր, աստուածային սիրոյ ակունքից բխեց անսպառ ներում:

Բեքդեհեմի վրայ առկայծեց ներման աստղը: Հետագայում Յիսուսի երկրային կեանքը սիրոյ եւ ներման խորհրդանշ դարձաւ:

Ներման գաղափարով են օծուած Յիսուսի պատմած առակներից շատերը եւ յատկապէս դրանց թագն ու պսակը՝ *Անառակ Որդու վերադարձը*:

Եթէ ես փանդակագործ լինէի եւ իմ առաջ խնդիր դրուէր ստեղծել մի արձան, որը լաւագոյնս կը խորհրդանշէր Աստուածաշունչը, ես կը փանդակէի Անառակ Որդուն՝ գլխահակ ու ծնկածեծ, ալեհեր հօր գրկում ծուարած եւ այդ փանդակը կ'անուանէի «Ներում»։ Բանգի այս առակը բարձրագոյն ներման օրինակ է:

«Անմիջապէս հանեցէ՛ք նրա նախկին պատմութեանը եւ հագցրէ՛ք նրան, մատանին նրա ձեռքը տուէ՛ք, եւ ոտքերին՝ կօշիկներ, բերէ՛ք պարարտ եգր, մորթեցէ՛ք, ուտեն՛ք եւ ուրախ լինեն՛ք, որովհետեւ իմ այս որդին մեռած էր եւ կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց»:

Հօր աւագ որդին իր կողքին էր միշտ, բայց հնարաւոր է նա մի օր թողնի հօրը իր ծերութեան հասակում ու լքի նրան, որովհետեւ աւագ որդու հօր մօտ կենալը գուցէ աւելի որդիական պարտականութիւնից էր բխում, քան սիրուց ու անխախտ համոզումից: Հայրը դա չի կարող հաստատ ասել: Բայց մի բան նա հաստատ գգում է՝ փոքր որդու դարձը վերջնական է ու անբեկանելի: Նա գալիս է հօր մօտ աշխարհի թոհուրոհից յոգնած թրծուած, կեանքի լաւ ու վատ կողմերը նաշակած, կեղտից մաքրուած, կեանքի հանելուկը լուծած: Նա գալիս է իր հօր գրկում հանգիստ առնելու, նա վերադառնում է իր սկզբին:

Մէկ այլ դրուագ.

Յիսուս խաչին վրայ է՝ աջ ու ձախ կողմերում աւագակները: Նա ապրում է իր կեանքի ամենատառապալի վայրկեանները: Եւ այդ պահին իսկ զոջացող աւագակին է ուղղում իր անսպառ ներման խօսքերը. «Ճշմարիտ եմ ասում, այսօր դու ինձ հետ կը լինես դրախտում»:

Յիսուս խաչի վրայ գամուած ներում էր հայցում, ներման միջնորդ դառնում Հայր Աստծոյ եւ աստուածասպան ամբոխի միջեւ: Իր տառապանքի կիզակէտում իսկ մրմնջում ներման խօսքեր. «Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն գինչ գործեն»:

Շատ յաճախ սակայն մարդիկ հարցը հետեւեալ կերպ են դնում. «Եթէ Աստուած ներող է, ինչո՞ւ է մեզ պատժում», բայց չենք հասկանում, որ ամէն մի մեղք հատուցում է պահանջում: Այո՛, եթէ երեխան բաժակ է կոտրում, ծնողը գրկում, համբուրում է նրան ու ներում, բայց ո՞վ է վնասում բաժակին համար. հենց ինքը՝ ծնողը: Ներումը միշտ իր գինն ունի: Եւ Աստուած այդ գինը վնասեց իր որդու խաչի վրայ տառապալից մահով:

Ցաւօ՛ք, ներման այդ շնորհը յանախ պակասում է մեր մէջ: Ամէն մէկս մի հաւատաւորնի՛չ դառած յանախ մէկս միւսի հանդէպ այնպիսի մեծ ատելութեամբ ենք լցում, այնպիսի դատեր տեսնում, որին կը նախանձէին նոյնիսկ հեթանոսները:

Եթէ մեզանից որեւէ մէկն ուզում է իմանալ, թէ ինքը որքա՛ն է սիրում Աստծուն, թող յայտնի լինի, որ այդ սէրը ուղիղ համեմատական է այն սիրուն, որով սիրում է այժմ մեր դիմացը կանգնողին, մեր դրացիին, պատահական մի անցորդի, որին այսօր տեսանք նանապարհին առաջին եւ գուցէ վերջին անգամ:

Մենք ներենք միմեանց, իսկ այն մարդու պատիժը, որը մեր կարծիքով մեղանշել է մեր դէմ, թողնենք Աստծոյ դատաստանին եւ յիշենք Աստծոյ խօսքը, երբ նա ասում է. «*Վրէժը իմս է, վրէժը ինծի՛ն՝ ձգեցէ՛ք*»:

Եւ երբե՛ք խաղաղութիւն չի լինի մեր մէջ, երբ այնտեղ պակաս է ներման ոգին: Նա ով ներել չգիտէ, չի կարող հոգով խաղաղ լինել: Ուրեմն ներենք միմեանց եւ ասենք «*ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄՆԵՆՅՈՒՆ*», Հօր, Որդու, եւ Սուրբ Հոգու անունից, որին է միայն վայել փառքը եւ երկրպագութիւնը այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից• ԱՄէ՛ն:

ԸՆԾԱՆՈՒԷՐ ԱԲՂ. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ

Ջգոյշ կացէ՛ք անձանց. եթէ մեղիցէ եղբայր քո, սաստեա նմա. եւ եթէ ապաշխարիցէ, թող նմա. եւ եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, եւ եօթն անգամ դարձցի ի քեզ եւ ասիցէ՝ ապաշխարեմ, թողցես նմա: (Ղուկ. ԺԷ 4)

«Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս եւ ասէ. Տէր, քանի՞ ցս անգամ թէ մեղիցէ ինձ եղբայր իմ, եւ թողից նմա. մինչեւ յեօ՞թն անգամ: Ասէ ցնա Յիսուս. Ոչ ասեմ քեզ՝ թէ մինչեւ յեօթն անգամ, այլ մինչեւ յեօթանասնեկին եօթն: (Մտք. ԺԸ 21):